ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No ---------- « » « » 2022 թ.

N 2118-Ա/2 **18.11.2022 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1975-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշման հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 28-ի «Թունիսում Ֆրանկոֆոնիայի 18-րդ գագաթնաժողովի շրջանակներում պատանի երաժիշտ-կատարողների համերգի կազմակերպման ծրագիրը հաստատելու և գումար հատկացնելու մասին» N 1975-Ա/2 հրամանի 2-րդ կետում 4421,0 հազար (չորս միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար) դրամ բառերը փոխարինել 5531,0 հազար (հինգ միլիոն հինգ հարյուր երեսունմեկ հազար) դրամ բառերով:

2. Նախարարության գլխավոր քարտուղարին՝ կնքել սույն հրամանից բխող՝ 2022 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին»

դրամաշնորհի հատկացման N ՄՇԴ-363 պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիր:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X _____